Գրականուրբիւնն կը սիրե՞ս . — Գրականութիւնն ոչ միայն կը սիրեմ, այլ՝ եթէ կայ աւելի բառ մը՝ կը պաշտեմ իսկ . մարդ գրականութեան հեշտալից ամպուռազով եւ նեքտարով կարծես կը մոռնայ մարմնական եւ հոգեկան ցաւերն . հո՛ն մարդուս միտքն կ'ազնուանայ եւ սիրտն մեծաթուիչ կը վերանայ . գրիչն՝ իմ վրաս չափելով՝ կենաց մականն կը կոչեմ, քանզի պահ մը կը մտածեմ եւ կ'ըսեմ ինքնովին թէ՛ առանց գրչին ինչպէ՛ս՝ պիտի կարենայի ապրել, եւ կ'օրհնեմ զգրիչ, այն սուրբ գործին, որ երկնապարգեւ շնորհ մ'է, եւ առանց որոյ մարդ պիտի ապրէր անծանօթ, եւ մտքերն պիտի լինէին միշտ վայրենի :

Ո՞ր ընկերուրբեկնն կ'սխորժիս . — Գրական ահու մըներէն ամենէն աւելի կ'սխորժիմ . հո՛ն մարդ կ'ուսանի եւ կը զարգանայ մտք . կ'ատեմ սակայն զայնս որք մուտ կը գտնեն

այդ ախմբոց մէջ իւրեանց գիտցածն եւ չգիտցածն ի վաճառ հանելու համար :

Ո՞ր տեսակ խօսակցութիւնն կը սիրես . — Ամենէն աւելի լուսթիւնն կը սիրեմ . մարդ ինչե՛ր չըսեր բան մը չըսելով հանդերձ . լուսթիւնն շատ անգամ կը խօսի զոր ինչ բերանն անկարող լինի խօսել . աչերն՝ լուսթեան մէջ՝ բերանէն աւելի աղդեցիկ եւ ճշդիւ կրնան սրտին զգացմանց արձագանգն լինել . կին գրագէտ մ'արդարեւ ըսած է՝ « Ի՛նչ պերճախօս լեզու մ'է լուսթիւնն » :

Գիւնաց վրայ ո՞ր գոյնն կ'ընտրես . — Տըխրարոյր գունատութիւն մը, խէական ըզգացմանց անոյշ դրոշմն :

Գրականուրբեան ո՞ր ճիւղն կ'ընտրես . — Բանաստեղծութիւնն, սրտին լեզուն, հոգւոյ արձագանգն . բնութիւնն բանաստեղծութեան վրայ չափուած է . կեանքն բանաստեղծական հիւլէներու գիրկընդխառնում մ'է . մարդ ամէն տարիքի մէջ բանաստեղծ է, բնածին բանաստեղծ . սէրը բանաստեղծութիւնն իսկ է, չը կայ տարիք մ'որ սիրող չը լինի . մարդ

կը ծնի սէրն ունենալով իւր սրտին մէջ, կը մեռնի սէրն ունենալով իւր սրտին մէջ. բանաստեղծ է նա, բանաստեղծ կը ծնի, եւ կը մեռնի բանաստեղծ. կեանքն արդէն անմեկնելի բանաստեղծութիւն մ'է :

Երեք վիճակաց գո՞րն կը նախընտրես. — Գրագէտ մ'ըսած է « յեանագոյնն կամ գերագոյնն ». ես կը չափաւորեմ այդ խօսքն եւ կ'ըսեմ « միջակն ». ամէն բանի մէջ — ընդհանրապէս — միջակն է զոր կ'ընտրեմ. ոչ շատ բարի լինել կ'ուզեմ եւ ոչ ալ քիչ. ազքատ լինել այնչափ չեմ ցանկար որքան հարուստ լինել, բայց եւ այնպէս եթէ հարուստ եղած լինիմ չեմ ցանկար ազքատ լինել :

Ո՞յք եւն ամեկեկ խարոզ երեւոյթք. — Հարսանեկան պսակն եւ կղերական վերարկուն :

Ծե՞ր երջանիկ քե ոչ երիտասարդ երջանիկ շիւնեղ կ'ուզես. — Բնական բան է զի երիտասարդ երջանիկ կ'ուզեմ լինել, ըստ որում ինձ կը թուի թէ պէտք չէ որ ապրիմ երբ ծեր լինիմ. եւ նոյն իսկ եթէ ապրիմ, ո՞չ ապաքէն չը կայ երջանկագոյն քան երա-

նիկ յիշատակ մը դառնաղէտ աւուրց մէջ դըժբախտութեան :

Ո՞ր վիպասունն կը սիրես. — Մանաւանդ Տիւման, անապառ գանձ, անխմանալի հանձար, որ կըստեղծէ, գարձեալ եւ միշտ կըստեղծէ :

Ո՞ր քաւերաբանն կը սիրես. — Շէյքսպիրէն վերջ միայն Հերնանիին հեղինակն. Շէյքսպիր անզուգական է իւր սեւին մէջ. նորա մտաց սահմանն անբաւ է, նորա հանձարն կ'ընդգրկէ տիեզերք մը, նորա հոգին կը հմայէ եւ կը գինովցնէ հոգիներ. նա շունչ մ'է աստուածային, կենաց եւ իտէալին անարատ պատկերն, մարդկային սրտերու հարազատ հայելին է :

Իսկ ո՞վ է հայ քաւաստեղծն եւ վիպասունն զոր կը սիրես. — Առաջինն Ալիշանն է իւր մեծ գործերուն մէջ, յորս անզուգական է. նա ծեր է, բայց կը գրէ. Հիւկոյի նման մեծ մարդոց մտքերն երբեք չեն գիտեր ծերանալ : Երկրորդն ո՞վ լինէր եթէ ոչ Ր. որ ազգին պանծալի գրագէտն է. ո՞վ զայն կարդաց, չը

խանդավառեցաւ . ո՞վ զայն կարգաց եւ չը բորբոքեցաւ :

Բնութեան ո՞ր առանձնաշնորհողներն կը սիրես . — Ո՛չ Ժուժանաի գետն՝ որոյ ջուրց մէջ մարդ կ'երիտասարդանայ , ո՛չ Ժիժէզի թալիզմանն՝ որոյ ոսկի մատանին աներեւոյթ կ'ընէ զնա որ կը կրէ զայն , ո՛չ դժոխոց Սթիքսն՝ որոյ յատկութիւնն է անվիրաւորելի ընել զայն որ կը լուացուի իւր ջուրց մէջ , ոչ իսկ Փաքտօի գետն՝ որ ոսկեղէն տախտակներ կը հոսի — այլ Լէթէն . քանզի ի՛նչ հեշտին քան կեանքն ի մոռացօնս անցելոյն եւ ներկային , ի մոռացօնս անձին եւ կենաց :

Ո՞ր աջներն կը սիրես . — Այն աչերը որ երկնից գոյնն ունին , ջինջ եւ թափանցիկ կապոյտ մը . կապոյտ աչքն անարատ սրտի հայելին , հոգւոյ կենդանի պատուհանիկն է . կապո՛յտը , միշտ կապոյտը , այնքան բոցավառ որքան կախարդիչ :

Ո՞ր ազգիկն գրականութիւնն կը սիրես . — Հարկաւ Ֆրանսական գրականութիւն որ իւր արամադրութեան ներքեւ ունի գրանուէր

զօրաց անթիւ բանակ մը , որք յաղթական կը փառազարդեն դրականութեան հորիզօնն իրբեւ աստղեր անհամար :

Ո՞ր ղեզոււն կը սիրես . — Ամենէն աւելի մայրենի լեզուս , կամ աւելի ճիշդն խօսելով կը սիրեմ այն չքնաղ լեզուն զոր նախահարքս կը խօսէին . ի՛նչ հարուստ եւ քաղցրալուր , այլ մանաւանդ որքա՛ն կանոնաւոր եւ հարազատ քան այն լեզուն զոր կը խօսէր Մեսրոպ , զոր կը խօսէր Եզնիկ :

Իսկ ո՞ր ղեզոււն կը գտնես ամենեկն ներդաշնակն . — Իտալացւոց լեզուն , ի՛նչ ըսեմ , թռչնոց լեզու՞ն թէ հրեշտակաց լեզուն , ո՛չ , ճիշդ է զի ըսած են «նա սիրոյ մեղեդին է» :

Ձի՞նչ բան կը սիրես . — Կը սիրեմ ի՛նչ որ ճշմարիտ է , բարի եւ գեղեցիկ , եւ մանաւանդ գեղեցիկ :

Ի՞նչ բանն կը խորշիս . — Երեք բաներէ կը խորշիմ . — այն ատելի մարդէն՝ որ քսակներն անզգամ մետաղներով կը ընու , իսկ սիրտն՝ փշերով . այն մարդէն՝ որոյ գլուխն թափուր է , իսկ բերանն՝ լեցուն . մանաւանդ

կը խորշիմ՝ այն անմիա արարածէն որոյ գըլ-  
խուն մէջ վատ խորհուրդներ կը յուզուին ,  
որոյ սրտին արիւնն սեւցած է , եւ որոյ շըր-  
թանց վերայ ոսկի բառեր միայն կը յածին :  
Կը հասկնաք անշուշտ . առաջինն՝ հարուստն  
է , բայց ագահ եւ անսիրտ հարուստն , երկ-  
րորդն՝ յաւակնոտ տղէտն է որ կը նկրտի ծա-  
խել ինչ որ չունի , եւ երրորդն՝ ամենէն  
սոսկալին՝ կեղծաւոր շողքորթն է որ աւելի  
թունաւոր է քան իժն եւ աւելի խոտելի քան  
սատանայն :

Ի՞նչ բան սրբագան ե՛ք հարւար . —  
Մօրս յիշատակն . . . :

Ի՞նչ ազգի կ'որդեիր ծնած յիմեղ . —  
Հայ . . . :

Կը սիրե՞ս փառքն . — Ի ծննդէ փառա-  
սէր եմ . ո՞վ արդէն չը սիրեր փառքն , այն  
ոսկեհուռ ոգին որոյ ծնունդն զոյգ է ընդ  
մարդոյն . փառասէր եղած չլինելու համար  
մի միայն միջոց կայ — ծնած չլինել . եւ ար-  
դարեւ չըկայ մարդ որ առաւել կամ նուազ  
չը սիրէ զփառս . ինչ որ կը գործէ նա՛ գէթ

դոյզն քանակաւ փառասիրական ոգւով կը  
գործէ : Փառքն մարդկան ոսկեծոյլ երազնե-  
րու իրականացումն , դրախտէն բարոյական  
աշխարհին մէջ նետուած խաբեպատիր ցնորք  
մ'է , որ իւր թեւերուն վրայ ի հեշտութիւնս  
կ'առաջնորդէ զայն ում արժանի կը դատէ  
իւր մրցանակն . ըստ այսմ , ամէն ոք որ կեայ՝  
փառասէր է : Մարդ կը մեռնի , բայց փառքն  
կ'ապրի կեանքէն զինի եւս : Տարաբախտն ժիւ-  
պէս փառաց համար , փառաց սիրովն եւ հրովն  
մեռաւ , եւ իւր վերջին խօսքն եղեւ — փա՛ռք :

Ո՞ր գոյներն կը սիրես . — Կապոյտ եւ  
կարմիր գոյներն , առաւել քան զամենայն .  
երկոքին ի միասին — կապոյտն եւ կարմիր —  
սիրոյ դրօշն կը կազմեն . մին — կապոյտն —  
սրբութիւն , միւսն — կարմիրն — ցանկու-  
թիւնն է :

Ենթադրեմք թէ կը մեռնիս , ո՞ւր կը կտա-  
կես խոհերդ . — Իտէա՛լին :

Ո՞ւր կը կտակես արձատուդ . — Շիրմի  
մը՝ ուր հոգի մը կայ որ մթաստուեր ուռ-  
ուականս է . . . :

Ո՞ւմ կը կտակես երեւակայնութիւնիդ . —  
Իրական մտքի մը :

Ո՞ւմ կը կտակես Տխուր վայրկեաններդ . —  
Ոչ ումք կենդանի էութեան . տխուր վայր-  
կեաններս ինձ հետ կը տանիմ, հողին կը  
կտակեմ :

Ո՞ւմ կը կտակես յոյսերդ . — Ո՞ւմ թողում  
յոյսերս, որք այսքան շուտ կը մարին . թո՛ղ  
վազանցուկ յոյսերս գերեզմանիս ցուրտ մար-  
մարին վրայ սաւառնին :

Ո՞ւմ կը կտակես երախտագիտութիւնդ . —  
Առ վարժարանն իմ, զոր յանչափս կը յարգեմ :

Ո՞ւմ կը կտակես քնիծաղդ . — Քնիծաղս  
եւ հեգնական հայուածս այնմ՝ որ նպատա-  
կաւոր բարեկամութիւն կ'ուզէ հաստատել  
ինձ հետ :

Ո՞ւմ կը կտակես սիրոյդ . — Բոլոր սիրե-  
ցելոցս :

Ո՞ւմ կը կտակես ժպիտդ . — Անցնի՛նք . . . :

Ի՞նչ մահուանք կ'ուզեիր մեռնել . — Ու-  
րախ զուարթ աղջիկ մը մի միայն յանկար-  
ծական մահուամբ ուզած է մեռնել, ես կ'ու-

զեմ մեռնելէս վերջ՝ կրե՛լ, վերջապէ՛ս . . . :

Ո՞ր ծաղիկներն կը սիրես . — Միօզողի-  
սըն որ կը մրմնջէ «գիս մի՛ մուանար», բան-  
սէն «որ յիշէ զիս» կ'ըսէ հեզութեամբ, եւ  
վարդն որ շատ մը բաներ կը հծծէ սրտին :

Ամենեկն աւելի որո՞ւմ կ'արգասիս . —  
Տարբարախ հոգւոյ մը :

Ո՞ր տեսակ ողջոյնն կը սիրես . — Զայդ-  
ճշմարտիւ չեմ կարող խոստովանիլ առ այժմ,  
ուրիշ առթիւ . . . :

Եթէ ոգի մ'ասե՛ր քեզ «խնորհ յիկե՛ն ի՛նչ  
որ կ'ուզես» զի՞նչ կը խնորհիր . — Հանճա՛ր . . . :  
Զի՞նչ բան ակնածանօ՞ք կը պաշտես . — Այն  
անձնուէր եւ վսեմ ոգին զոր բարեկամու-  
թիւն կը կոչեն եւ, առանց որոյ կեանքն ի ս-  
պառ դառնութեանց ճաշակ մը պիտի լինէր,  
եւ զոր ոչինչ մեղք պիտի կարենայր ամբիւ  
սակաւ ինչ :

Զի՞նչ բան կ'ասես . — Ռամի՛կը . կ'ա-  
տեմ եւ այն որ չունի ազնիւ զգացումներ,  
վերջապէս այն որ չունի վեհանձն ոգի :



## ՄԱՀ ՍՈՎՐԱՏԱՅ



Որպէս շուտան ի ջուրց վերայ, եւ գոր կրփէ քիակն ի վայր,  
Գրուիս նորա քոյլ մեղկութեամբ ի կուրծքս իւր կորանայր.  
Արեւանունք նորա գոր մահ կիսով եւեք չափ փակեաց,  
Անկեալ անդրէն խաղաղիկ ի վերայ խոնջ նորա աչաց,  
Թրէին, որպէս երբեմն, իւրեանց քաֆուն ընդ նովանեալ,  
Անփոփիլ ի լրուրեան կամ յերագել խոկուն բընաւ.  
Եւ բանն, ըմբռնեալ յանկարծ ի քրուիչ իւր յեօին,  
Ի կիսաբաց շրթանց վերայ, աւանդ, յածէր սակաւին,  
Եւ ի նորա դիմաց վերայ որ այծի էին անկենդան,  
Ծաղկեալ ծաւալէր գոզցես ծրպիս յաւերժական.  
Եւ ձեռք նորա, կարկառեալք, որպէս եւ միտս սովորն էր,  
Ցուցանէին դեռ գերկին ի յամբարցեալ իւր մասն ի վեր:

Լաւարքին

## ԱՌ ԱՇԽՈՅԺ ԱՂՋԻԿՆ

(որ մասնաւոր փերքուած մը խնդրեց յիկեմ)



Oh! ne vous hâtez point de  
mûrir vos pensées!

V. Hugo

Դու խնդրեցիր փայլքը շեշտով մանկական  
Որ նուիրեմ մի փերքուած փոյգ անուան.  
Ա՛ն, զինչ կարծես, ըզմանկութիւն հեշատուն  
Ես չեմ կարող երգել, աւանդ, զուարթուն:

Ձի թէ մուսայն նորա ըզեր յիմ սրտին,  
Եւ յիմ հոգւոյն եղ ըզմեհտար սուրբ հեշին,  
Սակայն եւ ոչ սրտս զրշին իմ անգոր  
Ձոյժն ի յածել զանձն իմ նորա մեղմ յորտ:

Քայց եւ այնպէս լըցեալ ի յոյգ, ի նախանձ,  
Կարեմ գոչել ցուրտ շեշտով մ'այլ սիրախանձ,  
« Երանի՛ քեզ, մանուկ, ծաղիկ փայլաբոյր,  
« Երանի՛ քեզ զի մօր ծրծես լ'ստմբոյր »:

Պարզ եւ լրասակ է մրթնորս քոյ կենաց  
 եւ քոյդ երկին ոչ երբեք է ամպամած,  
 Բայց գիտցիր քէ օր մի եւ գայ անյապաղ,  
 Ուր հորիզոնդ պայծառ՝ լինի մրթնեալ:

Այն դուռ որում դու մերձենալ երագես  
 Հեռ երեւոյր՝ ու ունի սիրուն տեսարան,  
 Բայց գիտցիր քէ վրասաց ցաւոց աղեկէզ  
 Նա սուկալի է մի դրժնիկ սապարէզ:

Պարտիզին մէջ կայտէ՛ ուրախ եւ զրւարթ,  
 Ծաղիկ քաղէ՛, փունջեր շինէ՛, միտ հանդարտ .  
 Մ'ասեր բրնաւ քէ զինչ են կեանք, զի՞նչ աշխարհ,  
 Եւ մանկութեան քերքէ՛ անփոյթ սուրբ ըզբնար:



## ՄԱՀ ՄԱՆԿԻԿԻՆ

(Վարսէնորդիս)

~~~~~

Ի՞նչ, ալ չըկնս դու, աղջիկդ անմրմունջ,  
 Ի՞նչ, ալ չէս շքնչեր հո՛ն ուր առախ տունչ .  
 Սիլվիան, ափսո՛ս, անոյ՛ց Սիլվիա,  
 Ջարթի՛ր, է՛լ կանգնէ, քո՛ղ մայրդ չըլայ:

Դու որ, կուսագեղ ո՛վ մանկիկ սիրուն,  
 Արեգակին հետ զարթած աւօտուն  
 « Մայր, մայր » հրժժէիր աչերուդ հրրով,  
 Ի՞նչ, սլ չըկնս դու, նրնջես անխրոով:

Դու՛ որ երբ գիշեր ծաւալէր մրթին,  
 Ո՛վ դու հրեհեհակ փափկիկ անբնին,  
 Ջեններդ երկարած մօրդ վրզին փարած  
 Ողջոյն կուսայիր սիրով ձեռնամած,

Ինչպէ՛ս մարեցար վայրկենի մը մէջ,  
 Ինչո՛ւ մարեցաւ կենացդ հուրն անշէջ .  
 Միքէ՛ դեռ մանուկ՝ ասեցիր զերկիր,  
 Միքէ՛ զրւարթնոց կենոնց ցանկացիր:

Ա՛հ, զարթիր բրնէդ, եւ աչերդ բաց,  
 Այն կապոյտ աչեր որոց ի հայտաց

Սուգէիր անդէն մեր հոգւոց ի խոր,  
Ուպէս ի լրնակ կոյս մը գրլիսկոր:

Սիլվիան, ես եմ, էս ում ծրպսէիր  
Սյնման նագանօօօ էւ շընոհալիր,  
Արքընցիւր կ'ըսեմ, ծրպսէ՛ անյապաղ,  
Մայրդ դեռ նրնչէ ի քուն անխաղաղ:

Եւ անն կէցած քու որբանիդ քով,  
Ըզբեզ կը տեսնեմ՝ հանդարտ անվրդով,  
Եւ, աւանդ, կուլամ, քո՛ղ լայ եւ աշխարհ,  
Քանզի հրեւեռակ մ'էիր քակահար:

Սառած անկեկոյան ո՛վ դիակ անեունչ,  
Ոյր մահ հոտոտէ թգոյր անշքունչ,  
Մահն ինչո՞ւ համար քողուց անայլայլ  
Սյնման հրապոյրդ, այնման գեղդ եւ փայլ:

Քեզ համար երկիր, ո՞ն, չէր արժանի,  
Սյո՛, բաց թելերդ ոսկի ծիրանի,  
Թըռի՛ր դէպ յերկին, քրո՛ւր բարձրաթիռ,  
Ո՛չ, քեզ համար չէր արժանի երկիր...:



## Յ Ի Շ Ա Տ Ա Կ



Եւ պերճաւուր Կորփուրեայ թողեալ զափունս քաղցրա-  
ծրպիս,

Ուր հանապազ կենդանալից իրէ երկին կապուսակ,  
Դեմեւրէ սիգանեմ սահէր հանդարտ խրոխսապան՝  
Քերեալ ընդ միտտ առ ափամբք ապառաժուս լեռնակին:  
Չովաւունչ շընչէր նողմիկ. սարածէր օդ երեկոյին.  
Արեգակն ի յարեւմուս մեծառ փառօփ խոնարհէր,  
Եւ հանանչք բոցավառեալ ծաւալէին ընդ բընաւ:  
Նա ինքն եւ ես, մեկուսացեալ ի Դեմեւրէայ կողանց վե-  
րայ,

Չաչկունս ի ծով դիտեմ ե՛ւ վրդովեալ ե՛ւ անմըմունչ՝  
Ըզվրփրփրադէզ գօտեակըն ջուրց զոր Դեմեւրէիկ թողոյր  
յեկոյս,

Եւ, անխօս, լրո՛իկ մընչիկ, արտաուարք եւ դողդոջուն,  
Պինդ գըրկեմ գիրեարս անդէն հառաչանաց ի փրզնուկ:  
Մայրամուսն արեգական վերջին հանանչք լուսանէր  
Թեթեւակի ծըվծրփային ի ջուրս խրոով ալեծածան,  
Մինչ ուղեկցիս դէմքն փափուկ ի լոյս հրոյ արփիա-  
բուխ  
Շողոզային յանկարծօրէն ի ցուլացմունս ջինջ արտա-  
ուաց:

— Ո՛չ, խանդակաք մայր իմ ֆաղցրիկ, ո՛վ սիրազեղ դու  
ովկէան,

Տրտմաբախիծ այդպէս մի լար ի ջերմաջերմ արտառու,  
եւ մի գայեր լընուր, աւա՛ղ, յուսակրտուր հառաչանօք:  
Տե՛ս շուրջ ըզքեւ քրուչունք խայտան մեծաքրոյիչ հոյլ ի  
հոյլ,

եւ լուսնակն յերկնից կամար շողայ սրնոյն նրշուլիւ.

Մի լար, մա՛յր իմ, բարւոք ուղւոյ ուրախ նիւթ եմ այ-  
սոքիկ...»

— Սիրո՛ւն զաւակ, որքա՛ն սիրեմ, որչա՛ն պատճեմ ըզ-  
քեզ, եղա՛նկ.

Չուղւոյ երբեք ոչ վասարար ես արտառուեմ դառնակրս-  
կիծ,

Ոչ իսկ կենաց խորհիմ ընդ փոյր կորուսանել անդէն  
ըզշունչ,

Այլ, որդեա՛կ իմ, խորհիմ զիմոր քողուլ ըզձեզ որք ի  
յասիս,

Ո՞ն, զայս ողբամ, քանզի ի ձէնչ կամիմ ես ոչ հեռա-  
նալ...

Կրկին նըւագ ըզլորանալ ոչ եւս Տեսից ես լուսնակին,  
Որպէս երբեք եւ ոչ Տեսից զիմ սիրելիս սարակայ.

Ա՛ն, ըզնոսս ես հւր քողի. ընդէր ինձ քոյլ չէտուր, որ  
դեանկ,

Տալ զիմ կենաց վերջին ըզշունչ հարազատաց ֆոց ա-  
ռնքեր...»

Քաղցրահրնչակ նա մրմրնջէր ի մայրենի սուրբ եղանակ,

Պի՛ւ սեւեռեալ յար զիւր հայեաց ջուրց ընդ երես լայ-  
նասարած,

Ուր գոգցես իւր զոյգ աչկունք որոնէին զինչ խորհուրդ,  
Կամ չտփէին զանջրբայես որ երկաւրէր զամ քան ըզգամ:

Իսկ ես յերկին վեր հայէի ուր պըլպըլայր վաղ իսկ  
լուսնակ,

եւ, հուսկ ապա, անձկանաւ եւ խանդագին սիրով լըց-  
եալ,

Իմ շըրքունք հրաբորբոք ըզվարդ այսից մօր իմոյ

Մընային առկախեալ որպէս մեղու զանոյք ծաղկանց...:

Անձ, յիշեմ զայդ մահաբոյր վայրկեան սիրոյ եւ զըզ-  
ուանաց,

Յիշեմ, ափսո՛ս, եւ սըզաւոր սրբիս հիւծեալ ի բարախ,

Մըսածկոն եւ քախծազին դիտեմ աչօք արտառուլից

Ըզբըլակ հանդիպակաց ուր մեռելոց գոյ հանգրբան...:

## Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր (1)



Դրացուհույս վարագոյր  
Մեղմիւ, անա՛, կը բացուի .  
Ոչ ոք զիսէ ինչ հրապոյր  
Ունին աչեր իւր ծաւի :

Թերեւս ուզէ լոյս տեսնել,  
Քանզի յանախ ի խաւար  
Անցնին օրերն անվայել,  
Մեռած ապրի նա յաշխարհ :

Այո՛, կտմաց բացուեցաւ  
Այդ մրօտակախ վարագոյր,  
Եւ երեցաւ առ սակաւ  
Այդ կոյս բոլոր յիւր հրապոյր :

Իսկ դեռ ինչո՞ն դէպ ի վեր  
Յիս չեն հայիր իւր աչեր .  
Բայց նա բանայ զպատահան  
Ո՛վ անպատում ցրնծութեան :

(1) Նմանողութեամբ Ալֆրէս քը Միլսէի :

Այո՛, բացաւ վերջապէս .  
Այդ ինչ չըբնալ արարած .  
Թերեւս ուզէ օդ առնել,  
Քանզի սիրոյ չէ բնեւէլ .

Քանզի զիսեմ սիրէ նա  
Որ զեփիւռիկ քայքայոյր  
Երբոր անցնի դիւրաստան  
Ոսկի վարսից սայ համբոյր :

Բայց ինք՝ երբեք չսայ համբոյր,  
Չը սայ նոյն իսկ չոր մէկ բոյր .  
Ես ինչ զիսեմ քէ ինչո՞ն  
Չունի հաւտակ ապրելու :

Գուցէ, կարծեմ ք՛է այսպէս,  
Դիսէ ինձ քէ եմ յրեսու .  
Այո՛, այս է, քանզի, ո՞հ,  
Ինձ նայեցաւ ժրպսով գոհ :

Վառէ՛, ո՛վ յոյս, սրբիս մէջ,  
Վառէ՛ ո՛վ հուրն իմանեէջ .  
Ինձ նայեցաւ, ինչ պահեմ,  
Այդ սիրուն կոյս վարդապէմ :

Եւ արդարեւ, ի բաբախ  
 Կր սրովիւ սիրս, աւանդ .  
 Այս ի՛նչ հրաճե՛մ, ի՛նչ բտե՛մ,  
 Ժրպսեցաւ ինչ բախտ նրան :

Բայց . . . ինչ կայ . հում նայի .  
 Ես կարծէի ամայի  
 Մեկնակ լինել բոլորսի՛մ,  
 Այժմ հւր նայի այդ աղջիկ . . . :

Հէ, կր ճօճէ զվարագոյր,  
 Վայ ինձ, նաեւ այ նամբոյր .  
 Այս ինչ մեծ ցաւ, հոյ է դայ :  
 — Աւարտնիս մէջ, ո՛չ, չրկայ

Այդ ծերուկին հանգիսակ  
 Տրգեղ մը՝ զոր աննաւակ՝  
 Ինացայ որ՝ այդ աղջիկ  
 Կր սիրէ միտս, գրուեհի՛կ . . . :

## Ն Ժ Գ Ե Շ Ն

### Առ Արայ

Մօտ եղբրաց անդ փաղափին Հերակլեայ,  
 Որ հրակային նրւիրեցաւ իբր բնծայ,  
 Մերձ Ջօնգուլսագ գեղջրն սիրուն ի հովիտս,  
 Գեղասեսիլ կայ Իւզիւլէզ փայցածայիտ :

Լայնասարած հրակայ լեռանց լինչ կոհակ,  
 Եւ յրնդարձակ քաւ խիտ առ խիտ յանսառակ,  
 Յար Իւզիւլէզ ակնապարար ծաւալի,  
 Տրխազգեցիկ, անմարդաձայն, ամայի :

Եւ վայելուչ կանգնեալ կայ անդ մի սրնակ  
 Սիրուն, անզարդ, եւրոպական ի հաճակ,  
 Որ գեղջ միայն փառք եւ պատիւն համարի,  
 Եւ ուր արձակ պարզի տեսիլ ամենի .

Դէպ ի յառաջ յոսարն ի վայր սրնակին  
 Տարածանի մի գահավէժ անագին,  
 Ոյր ո՛ք պայման դիտէ սոսկմամբ խորն անհուն,  
 Սարսափահար, յարիւն բմբոս, դողդոջուն .

Եւ հուսկ յբէ կասկած մոլի առուակին  
 Ըզմրոբնջիւն, զանեղ հեծիւնս լալագին,

Խոկայ խորին, սեւ ինչ խորհուրդ մահաբոյր  
Գայ սալ նրմա անգութ մանուան ըզմամբոյր .

Մերք նա հայի մութ ամպամած ընդ երկին,  
Եւ մերք հայի շուրջ զիւր ոսամբ ի գեխին .  
Եւ, մրքագնած, յիշէ յանկարծ հայրենիք,  
Յիշէ սրբին յոյսս ոսկեայ գեղեցիկ,

Եւ ըսքափի յիւր ծրնօղաց յիշասակ  
Եւ մանուանդ չըստ կուտոյն վարդապասկ,  
Որ կայ մրնայ իւր գայրսեան անձկանօք,  
Յար յուսպղիբի եւ սագնապեալ ի մորմոք .

Յեսս ընկրկի սակաւ սակաւ վեհօրէն,  
Եւ զիւր սրբին յորդ ըզգացմունս անօրէն  
Անդ եւ անդ իսկ գայ ի խրցին իւր անշուք  
Առ մի վայրիկ խեղդել ի դառն արսամուք :

Ո՞ն, մի՛, այդպէս մի՛ լար, նրծղեհ չուառական,  
Քանզի յուտայ լապսեր վառ կայ յախեսան .  
Կեանքն՝ փոփոխ պարագայից արուբեր,  
Պայքար, անուրջ եւ յոյսն իսկ է ոսկեհեր :

Օ՞ն, մի՛ զբխուր, մի՛ լար այդքան քախմալից .  
Հրամանին սոկալ պարսիս դու երկնից,  
Քանզի զԱստուած սիրես պաշտես ջերմապէս,  
Եւ մսփառել զիսես կենաց յասպարէզ :

## ԱՅՎԱԶՈՎՍՔԵԱՆ ՆԿԱՐԱԶԱՆԴԷՍ



*Մեր սրտերն քանի՛ մեծ հրճուանք կըզգան  
երբ կը լսեմք հայ արուեստագիտի մ'անունն  
աշխարհածանօթ : Աղամեանէն վերջ, որ պահ  
մ'արծարծեց հայ երիտասարդութեան մա-  
րած կարծեցեալ թատերասիրական ճաշակն,  
ահա՛ հասան եւ տիեզերահռչակ նկարչին Պ .  
Յովհաննէս Ա. յվազովսքի հրաշակերտ նկար-*

**Ծան.** — Չսոյն այս գրութիւնն, որ 1888 ամի Հոկտ. 27, թիւ 1445 Արեւելք օրամբերին մէջ հրատարակուած է, վերստին ի լոյս կ'ընծայեմք ոչ իբրեւ բննագատական, որ իւր պատշաճ ժամանակին միայն կրնայ կարեւորութիւն ունենայ, այլ իբրեւ նկարագրական ինչ, ի մտի ունելով զի այդ գրուած Մեծ Տաղանդին անսահման ճարտարութիւնն ցոյց տալէ ի գատ, կը պարունակէ եւս յինքեան զանազան գեղեցիկ պատկերներու նկարագիրն :

Նկարանդէսն, որ կը բաղկանայր քսան եւ չորս մին քան զմիւսն ընտրելագոյն իւզաներկ նկարներէ, տեղի ունեցած է զրեթէ վերայիշեալ թուականին, Ռուսական Գեասանատան մեծ սրահներէն միոյն մէջ, ընդ տնօրինութեամբ մեծանուն մասնագիտին պատուական բեռորդույն, Պ. Լեւոն Մազիրովի, որ անդամ է Ռուսիոյ Պետական Խորհրդոյ :

ներն : Ի լուր նկարահանդիսին բացման , հայ ինչպէս եւ օտար արուեստասէր հասարակութիւնն կը խուսի անդ հիանալ ընդ ճարտար արուեստն Հայ Տաղանդին :

\* \* \*

Յառաջին տեսիլ աչկունք կը շլանան միայն եւ չը գիտեն ո՛ւր սեւեռիլ . դիտօղն , շուրջ պատեալ ի գեղեցկէն , յարհաւրանաց եւ յարուեստէն , չը գիտէ ո՛ւր կասիլ . միտքն կը վերանայ դէպ ի բնութիւնն եւ սիրտն կը զգածուի որպէս իրականութեան հանդէպ : Ի՛նչ յանդուգն նկարներ . անդ ալեծուփ մըրբիկն սոսկումն միայն կ'առթէ ականողեաց , աստ՝ մեզմ հանդարտութիւնն ծովուց եւ երկնից ժպիտն կը ծնանի ի դէմն , եւ սիրտն կարծես կը սկսի թրթռացնել իւր զգացմանց լարերն : Անդ ի յայտ կուգայ հոյակապ Ակրոպոլիսն , ոչ թէ իւր աւերակաց մեջտեղ , այլ յիւր իրական շինուածին , այնպէս զի դիւրաւ նա գիտէ յափշտակել զերեւակայութիւնն եւ տանել զայն դէպ ի դարաւոր ժամանակս , մինչ աստ՝ քերթողից քերթողն՝ դիւցազներ-

դուն Հոմեր՝ նստած ի բարձունս ահագնատեսիլ ժայռին՝ կը նուագէ , ի լուր քաջարի Հելլենաց , զիւր քնար քաղցրախօսիկ :

Ահա՛ մանրանկարն այդ մեծ եւ բարձր նկարուց . ես չէի կարող հանդուրժել զի այն հիացումն եւ սքանչացումն , որով համակեալ էի , երթան երբեք թաղուիլ միայն ի խորսիմ սրտին , եւ նոյն իսկ առ այդ կը նկրտիմ աստանօր նկարագրել , զոր ինչ զգացի անվերջանալի ժամուց միջոցին , արբշիւ եւ վերացեալ այդ հրաշագեղ նկարուց հանդէպ : Նպատակս չէ երբեք թանկանցել մեծահանճար նկարչին ներշնչմանց , կամ ցոյց տալ ըստ պատշաճին ամպոց ոլորքն քաղցրաշիւս եւ ալեաց դէպ ի դէպ ծփանքն ի փրփուր , ոչ իսկ բացատրել նրբագննին շեշտերն կամ գծերն . այլ նպատակս պիտի լինի պարզել ըստ ներել պարագայից եւ կարեաց այդ նկարահանդիսին յիս թողած խորին տպաւորութիւնն :

Առաջին նկարն ի յայտ կ'ածէ Ակրոպոլիսոյ մի մտան եւեթ . գիշեր է մթին . աստեղք



ցիր եւ ցան կը պլլլան ի վերեւ նկարին . լուսնոյ արծաթափայլ շողերն միայն կը փայլին այդ մթին կապոյտ երանգեալ երկնից ի կամար . մինչ երկրի վերայ կը բարձրանան դէպ յարեւմուտս՝ Ամպրոպայինն Արամագդայ մեհենին եւ յարեւել՝ Աթանասայ սիւնապատ հոյակապ տաճարին միայն յառաջակողմեան մասունքն, միմեանց կցուած բեկեալ շրջարակով մը, ոյր ի միջի մշտավառ հուն կը բորբոքի յոլորս բոցեղէն, եւ որոց շողաւոր լոյսն ճարտարաւ ցոլացուած է ոմանց որք, լուսաթաղանթ բակին վերայ, հիացեալ ընդ բնութիւնն, եւ առաջնորդութեամբ ալեւորի մը, ձեռքեր յերկինս ամբարձած, փառք եւ օրհնութիւն կը մատուցանեն Ողիմպեան դից . նոցա հեռ երեք գեղանի կոյսեր, յեց տաճարին սեանց, ճշմարիտ նկարագիր մը կը պատկերացնեն անյիշատակ անցելոյն . եւ էութեան այս չքնաղ արարածք լիակատար իբրաւունք ունէին անշուշտ հիանալ եւ ապշել բնութեան սոյն գեղանկար տեսլեան հանդէպ . այդ անդին պատկեր ներկայ Ակրոպոլ-

սոյ քաղուած մը չէ, որոյ աւերակներն անձամբ այցելելոյ բարբախտութիւնն ունենենալ արդէն մեծ մտիթարութիւն մ'է ինձ համար, այլ, ընդ հակառակն, նոյն իսկ անցելոյն հմայիչ եւ մտացածին տեսարանն է դա :

Երկրորդ նկարին մէջ կը տեսնես զանհունութիւն, երկինք եւ ծով . գիշերոյ գեղահրաշ թագուհին կը ցոլայ յերկինս, պարզ եւ կապուտակ, ուր սպիտակ գոգցես հրեղէն գծեր միայն ոլորիւք ի քարչ կ'ածին . ծովն ի ծփանս լուսնակին ակնախտիղ շողերուն, կը մղէ յառաջ մի քանի նաւակներ դէպ ահաւոր ժայռն ներշնչմանց, ոյր բարձանց վերայ Համերոսն քաղցրազրուցիկ, ձեռներն դէպ ի վեր օդոյ մէջ երկարած, կ'երգէ իւր սրտին հեշտալուր մրմունջներն, որոց սքանչացմամբ կ'ունկնդրեն ամենուսա դէպ ի բնութեան քաղցրանուագ երգիչն գիմօղ Հելլէնք : Որքա՛ն փեմ է խորհուրդն յորում կը թաղուի հիացողին միտքն, որքա՛ն ճարտարութեամբ նկարեալ է տեսարան մ'որ լոկ աւանդութիւն մ'է :

Երրորդ նկարն ուշագրաւ է իւր բնական կատարելութեամբն . ոչխարաց երամակ մ'ի Խրիմ կանաչազարդ մարգագետնի մը վերայ է . ոմանք զբաղեալ են ճարակելոյ եւ ոմանք նստած ի դալարիս հանգիստ կ'առնեն որոճալով . պարզ են երկինք եւ հրաշէկ ամպեր ակներեւ ցոյց կուտան օդոյ ջերմութիւնն : Ծղբրիտ պատկեր մ'է սա իրականութեան . ամէն ոք հիացմամբ կ'ողջունէ զայդ նկար եւ ճշմարիտ հրաշակերտ մը կը կոչէ զայն . եթէ կարելի լինէր ոչ ոք անշուշտ պիտի կատեր ասելէ թէ այդ մեծաօքանչ նկար մինչեւ իսկ գեղեցիկ է քան զբնականն . եւ մանաւանդ որչա՛փ ճաշակաւ նկարեալ է թռչնոց հրօսակի մ'այդ խաղաղիկ երամին վերայ ի գունդ թառեւն , որ , թէեւ ոչինչ իրաւամբ առ մեծութեամբ պատկերին , այլ մեծապէս կը յաւելու նորա բնական գեղն :

Չորրորդ նկարին մէջ կը տեսնես ծագելն լուսնոյ ի Վոսիորին . առհասարակ համայնից գործ չէ այդչա՛փ հիանալի ճարտարութեամբ արուեստական գեղ մը տալով պատկերել ըզ-

բնականն , եւ այդ մտացածին պատկերն ամենայնիւ համաձայնեցնել իրականին . մինչ լուսնկայն փառապանծ երկնից կամարէն կախուած իւր արծաթանման շողերն կ'արձակէ ի մեղմահոս ջուրս Վոսիորին , Հարէմ-Իսկէլէսիի եւ Սարայ-Պուրնույի մէջտեղ , ուր ազօտ ցօլերուն մէջ գողցես մառախլապատ կ'երեւի Գրգ-գուլէսին , անգ՝ երկնահայեաց միւնարէներ եւ բարձրարեւծ աշտարակներ ու գմբէթներ կը ցոլանան ճաճանչաւէտ եւ կարծես կը ժպտին անամպ եւ կապոյտ երկնից . ի վերջոյ ամենայնի , այդ մթութեան աղօտ լուսովն ծածկեալ պարսպաց քով եռակայմ շոգեհաւ մ'եւս կը տեսնուի , որոյ պատուհաններէն լուսոյ կարմիր շառաւիղներ կ'երթան սուզել ջուրց մէջ : Ի՛նչ ուշագրաւ հրապոյր , ի՛նչ խարեպատիր իրականութիւն : Ով որ բախտ չէ ունեցած տեսնել Վոսիորի այդ գիշերային հմայիչ տեսարանն , յորում լուսինն բլրակի մը յետկուսէն ոսկեայ շողաւոր սկաւառակի մը հանգոյն ի տես գալով կ'իշխէ բնութեան եւ կը կախարդէ ամէն սրտեր ,

Թո՛ղ գոհանայ ի տես այդ ընտրեալ նկարին :

Ահա՛ վեցերորդ նկար մ՛եւս որ գիտէ դէպ յինքն քարչել ամէն քայլեր . շատք որ տեսած են Սթոքհոլմի պալատն , զարմացմամբ եւ սքանչացմամբ կը վկայեն նկարին ճշգրիտ իրականութեանն . աստ կրկին է տեսարանն որ կը պարզի աջաց . մինչ ընդ երեկս լուսնոյ սպիտակ սիււաւառակն կը շողայ յերկինս արծաթեայ շողեր կաթկթելով ջուրց մակարդակին վրայ , անդ՝ արեգակն շիկագոյն ի մայր կը մտնէ հրեղէն լոյս մը ծաւալելով քաղաքին վերայ եւ արքունական հոյակապ պալատին ճակատն հրացայտ նշուլիւ մը ցոլացնելով . արեւմտեան կողմն , ճովեզրն , կեցած են քանի մը շողենաւներ որոց քով յոգնաթիւ բազմութիւն մը խռնուած է եւ հանդարտ ջուրց վերայ նաւեր կ'երթեւեկեն . բայց որչա՛փ եւս գեղատեսիլ է պալատին մերձակայ փոքրիկ պարտէզն ուր սաղարթախիտ ծառոց մէջտեղէն գոգցես հրեղէն կայծեր կը փալփլան ջուրց հանդարտ երեսին :

Անցնինք հիանալ եօթներորդ հրաշակեր-

տի մը վերայ . յանկարծ սոսկու՛մն պիտի ըզգանք յառաջին տեսիլ . երկինք ընդ բնաւ սեւ եւ չարագուշակ , լայնատարած ամպեր իւրեանց ահեղ սպառնալիքն կը հեղուն մըրըկայոյզ ծովուն անհունութեան վրայ . ալիք փրփրադէզ կը ծփան սեւ կամ կանաչ խաւերու մէջ սպիտակ փրփուրներով , յորս փրկանաւն կը ծածանի թիամբարձ , յօգնութիւն հասած չարաբաստ ընկղմելոց , որք անդեղայոյզ նաւուն կայմին շուրջն տագնապեալ , յուսալից կ'ողջունեն փրկութեան այդ երկնառաք հրեշտակն . մինչ աստ լեռնային ալեաց վճին մէջ կ'անցնի սոյն տեսարան , անդ ի հեռուստ կը նշմարուի նաւն որ՝ դժնդակ մրրկին կատաղութեանն ենթարկուած՝ մերձ է ծովամայն սուզել . այդ արհաւիրանաց հանդէպ լուել չէ հնար , եւ թէ սիրտն վեր ի վայր յուզեալ կ'ամբոխի , այլ գրիչն պարզ մահկանացուաց ձեռաց մէջ չէ կարող պատկերել զայդ :

Տակաւին համակուած այդ աղիտալից նկարին սոսկմամբն , աչկունք շատ շուտ կը

չլանան երբ յանկարծ տասներորդ նկարի մը աննկարագրելի հանդարտութիւնն ի տես կուգայ . նիս քաղաքին ծովային չքնաղ տեսարան մ'է սա . փոթորիկն վաղ իսկ անցած է եւ ծովն հանդարտած . թօնք ի յայտ բերած են կապուտակ զերկինս , ուր սպիտակ ամպոց թրթուռն ոլորք յառաջ կը գնան մեղմիկ , թողլով իւրեանց ցոլքն ի մակարդակն ծովուն , հանդարտ եւ ողորկ նման հայեւունք . մինչ այսպէս , հեռուն ընդ Արեւմուտն հազիւ տեսանելի եւ գոգցես մառախլապատ ամպոց մէջ թաղուած լեռներ կը նշմարուին , որոց առ եզերք կը քայլէ նաւ մը մեղմասահ՝ երկար հետք մը թողլով յետկոյս . այս հանդարտ անհունութեան մէջ երեւակայել երկու սեւ թռչուններ որք Պոսիդոնեան հայելոյն վերայ կը սահին նուրբ հետք մը ի քարշ տանելով , որչա՛փ սիրուն է , որչա՛փ հրապուրալից : կը վերանայ միտքն այդ անշարժ հանդարտութեան ընդ յառաջ զոր կը կենդանացնեն մի' միայն երկու թռչունք , եւ երեւակայութիւնն կ'առնու իւր թռիչներ :

Մետասաներորդ նկարին մէջ դարձեալ Վոսիորն ի տես կուգայ , Վոսիոր որ այնչա՛փ քարշողական հրապոյր մ'ունի յինքեան , զոր քերթողք երգած են իւրեանց քնարին վերայ , զոր նկարիչք ստեղծած են իւրեանց վրձինն տակ : Գուզկունճուզի բարձանց սաղարթախիտ անտառաց ստորոտն հոյակապ զրահաւոր մը կեցած կ'իշխէ տեսարանին . լուսինն թէեւ չէ նկարուած՝ այլ նորա արծաթեայ ցոլացմունքն գոգցես բոցավառ կը հալին ի ջուրս , նաւուն դէպ յառաջակողմն . փոքրիկ առագաստանաւ մը , կողմնակի հակեալ դէպ ի ծովն , արագ կը հոսի նաւուն առ եզերք , որոյ փոքր պատուհաններէն կարմիր լոյս մը կը ցայտէ , նման հրաշէկ կայծերու , ցոլացման երկար հետք մը թողլով ի ծովն . նաւակ մ'ալ , ուր կան բազմաթիւ անձինք , բնութեան սիրահարներ , այն ինչ անցած փառապանծ լուսնոյն արծաթեղէն շողերու վերայէն , յօդս առկախ կը թողու թիւրն , յորոց կը կաթկթէ ջուրն հրաբորբոք : Ի՛նչ ճշգրիտ պատկեր՝ ուր քանդակուած է բնու-

թեան գեղն եւ ուր կը խօսի դողցես ան-  
մեկնելի ոգի մը :

Փոխադրուիմք ապա երկոտասաներորդ  
նկարին առաջ . հիացումն եւ զարմանք նախ-  
նական գործողութիւնք են որք տեղի կ'ու-  
նենան տեսողին մտաց հիւլէներու մէջ . հող-  
մայոյզ փոթորիկ մը , զերդ փուշոյ համաս-  
փիւռ մրրիկ , կը հալածէ կատաղարար ոչխա-  
րաց հօտն դէպ յալիս Տնիւրերի . քանի՛ ճար-  
տարութեամբ ցոյց տրուած է դոյն իրական  
պատկերն իւր յարակից ամէն պարագայիւքն .  
ի քարչ ահարկու հոսանաց , կը մայեն չուառ  
արարածներն , որոց դիմաց վերայ կը տես-  
նուի մեծ երկիւղ եւ սարսափ ընդ յառաջ  
սպառնացող վտանգին . մինչ ունանք , անկա-  
րող գիմադրելու մրրկին սասակութեան , կար-  
ծես կամովին կը սուրան արմատախիլ ծառոց  
ոստոց վրայէն . կորստեան մատնուած են  
արդէն , մինչ հովիւն , գաւազան ի ձեռին ,  
չփոթեալ եւ յուսակտուր , կը ջանայ ի զո՛ւր  
թոյլ չը տալ նոցա որ յառաջանան , զի սաստ-  
կաչունչ հողմն կ'առնու կը տանի զայնս եւ ,

փչրելով ժայռերն , երամակին վերայ կը տե-  
ղայ նոցա բեկորքն . եւ քանի՛օ՛ն գեղեցիկ  
եւ բնական կը լինի սոյն տեսարան , երբ մա-  
նաւանդ արծիւն գայ բերել ազխտաւոր գոյժն  
եւ թառել անմեղ հօտին ի թիկունս : Այս  
նկար է մին յընտրելագունից եւ պատուա-  
բեր հրաշակերտ մը եւ պարծանք մեծահրա-  
չակ նկարչին :

Այդմ կը յաջորդէ Վեսուվն ի ծագել ա-  
րեգական . կապոյտ է երկինք եւ ցիրեւցան  
կարմրախառն սալտակ ամպեր միայն կուգան  
փոփոխել այդ պարզ միօրինակութիւնն . ա-  
րեգակն այն ինչ կը ծագի մեծաւայելուչ  
իմն . Վեսուվ կը միայ երկնասլաց բոցերով ,  
եւ հրաչէկ լաւան կը հօսի ընդ զառ ի վարն  
կարմիր ներկելով լերան կողերն . այլ որչա՛փ  
բնական է ծովակին դուն ուրեք ալեաց գա-  
գաթանց բոցավառ կարմրութիւնն . հեռա-  
կայ լերանց վերայ կը ծանրանայ տաքու-  
թեան դեղնորակ մառախուղն եւ Վեսուվի  
առ եզերբ կը քայլէ կապոյտ եւ կարմիր ցո-  
լացեալ նաւ մը . եւ մինչ կը հիանայի այդ

տեսարանի վերայ եւ մտօք կը սաւառնէի վեսուվի հանգիպակաց ստորոտն, եւ ահա՛ երեք գեղջուկը կանգ կ'առնուին ա'նդ՝ հիանալ ընդ գեղեցիկն: Մասնաւոր ուշ կը դրաւէ այդ նկարին մէջ երանգոց ճարտար զետեղումն եւ մանաւանդ կապոյտ երանգին յաճախութիւնն:

Երեք մեծագիր նկարներէն մին է նաեւ եօթնեւտասներորդն որ կը ներկայացնէ Մօնթէ-Գառլօյի մայրամուտն արեգական. յանկարծ աչաց կը դիպի կոհակաց ճշգրիտ նկարագիրն, յորոց թափանցիկ մի շեղջ գոգցեսքեզ կը դիմէ թաւալգլոր. Մօնթէ-Գառլօ, անզուգական ճարտարութեամբ նկարեալ, երեկոյեան այդ հրեղէն տեսարանին գրաւիչ մի պատկերն է, ուր կը տեսնուին Գօռնիշ կոչուած արահետներն. այդ բարձրագիր լեռանց քով, դէպ ի ծովն երկարեալ կղզւոյ նման մարդաբնակ ահագին ժայռ մը կայ Մօնագօ յորջորջուած: Հրաշկ արեգն հորիզոնին վրայէն բնութեան իւր վերջին հրաժեշտն կուտայ եւ շողեր կ'արձակէ համաս-

փիւռ. ահեղատեսիլն Մօնթէ-Գառլօ կը փայլի շուրջ հրեղէն փուշով, զոր արեգակն կը հեղու ի նա իւր անսպառ հրոյ գանձերէն. մինչ ծովն ամբողջեալ է եւ ալիք կը կուտակին բոցեղէն շողից նկարովն սոգորեալ, հեռին կը նշմարուին մի քանի նաւեր կարմրաներկ եւ կարծես բոցավառ: Այս խորհրդաւոր տեսարանին մէջ ուր թռչունք ոմանք կը թռչտին յայեր կամ ի ջուրս, նաւակ մ'այդ զարհուրելի կոհակաց ի ծփանս կը յառաջանայ մեկնակ, եւ մինչդեռ դիտողն յափըշտակուած տեսլեան հմայքէն եւ հիացած նրկարին արուեստին՝ արբչիւ կը մնայ եւ անյաք, սիրտն երանի տալ գիտէ նոցա, որք ի նաւակին, իրականութեան հանդէպ սալշած, կը դիտեն խօլ հիացմամբ զբնութիւնն որ այնչա՛մի գեղեցիկ եւ հրապուրիչ է:

Մօնթէ-Գառլօի ալիքէն այն ինչ զորհուրեալ, կը կասիս ուր որ ստիմամբ պաշարուած էր միտքդ. եւ աչացդ ի յայտ կուգայ ամենեւին այլափոխ տեսարան մը. կը տեսնես զերկինս պարփակեալ թխագոյն խաւերու

մէջ ձիւնեղէն ոլորիւք . կը տեսնես զծով խաղաղիկ եւ վճիտ . հանդարտութիւնն է սալարձակ ծովու . յերկինս ճարտարահիւս նկարեալ այդ ոլորք գեղեցիկ որպէս զբնականն կը փութեն իւրեանց սպիտակ ցոլքն ի թափանցանց ջուրս ծովուն , ուր նաւ մ'առագաստ պարզած արագաստհ կը քայլէ . մինչ այսպէս հանդարտ է ամէն ինչ այս անհունութեան մէջ , սեւ թռչուն մ'երկայն հետք մը կ'առնու կը տանի ի քարշ եւ նկարն նովաւ է զի կը կենդանանայ . ի՛նչ հրապոյր է որ դէպ յինքն կը քարշէ զմարդ հիանալ գեղոյն վրայ եւ օրհնել ձեռքն որ գիտէ նկարել զբնութիւն . մարդ այդ լռին նկարին ակնսպիշ՝ կը շօշափէ զիրականութիւնն եւ կը վերանայ դէպ յիտէալն :

Անցնիմք վերջնոյս յաջորդող նկարին վրայ հիանալ , զի ով որ կ'երթայ տեսնել Այվազովսքեան նկարներն պարտի վստահել հիացման անհուն քանակին վերայ . հրաշալից տեսարանն է այս վերջալուսոյ ի Վոսփոր . էյուպի բարձանց վերայ , արեգին վերջին լոյսն

կը թափանցէ բարձրադիր ծառոց խիտ առ խիտ սաղարթուց մէջ . գետինն մի քանի հարէմներ նստած կ'իրագործեն իւրեանց աւուր նպատակն . ծովախորշին մէջ՝ հանդարտ եւ կապուտակ՝ կը տեսնուին նաւեր յընթացս կամ ի դադար . եւ մինչ կ'անցնի սոյն տեսարան զոր բախտ ունին վայելել Վոսփորեան հեշտաւէտ եւ կենսարար օդն շնչող բնակիչք , Սարայ-Պուրնույի կողմն շէնքեր կը ցոլան հրավառ եւ ճշմարիտ նկարագիր մը կ'ընծայեն երեկոյեան վերջալուսոյն . դէպ ի կամուրջն , շոգեհաւուց մուխն կը ծաւալի ընդ բնաւ եւ սքանչանաց ներդաշնակութիւն մը կը կազմէ . պարզ է երկինք եւ նման հրդեհի կարմիր մշուշ մը կը ծանրանայ վերին խառնուրուն մէջ . Վոսփորի մեծաքանչ վարագոյրներէն մին՝ գեղարուեստին կատարելագործեալ ճարտարութեամբն կը բացուի այդ նկարին մէջ , որում ակնդէտ՝ դիտողն յափշտակմանց եւ խոկմանց հեշտ վայրկեաններ կ'անցընէ :

Մինչդեռ Վոսփորեան գեղովն արբշիւ եւ

հմայեալ, սթափիս խոհերէդ եւ սեւեռես տկնարկդ մերձակայ քսաներորդ ահարկու տեսլեան վերայ, փափկութեան աշխարհէն արհաւրանաց յաշխարհն կը գտնես զանձդ փոխադրեալ. սեւ ամպեր կը մթագնեն երկնից կամարն եւ ահաւոր ժայռից վերայ ծանրացած՝ սպառնալիք կը ժայթքեն մրրկած ուփ ծովուն. ժայռերէն վար կ'իջնեն չարագուշակ թռչուններ, ջրոյ լեռներ փրփրադէզ կը խոռոխն եւ կ'երթան բախիլ զեղնած անդալար ժայռից՝ որոց վերայ երեք մարդեր ստպմամբ ահանատես կը լինին այդ սաստկամուռնչ ամպրոպին. հեռուն ալեաց մէջ կը ծփայ նա մը պարզած երեքներիեան դրօշն. ո՛չ, լուսնակարող է ամէն սիրտ, եւ սարսափի հառաչն ամէն կրծոց տակ չկրնար սեղմուիլ:

Տակաւին այդ զգացմամբ տողորեալ առաջնորդ ուխմք քսան եւ մէկերորդ նկարին քով. մրրիկն վազ անցած է. հանդարտութիւն կը տիրէ ամենուրեք. եւ թէ որ փափկութեան սիրահար մ'ես, յախշտակուած կը մնաս այդ փափկանկար երանգներուն: Ի՛նչ

գեղեցկատեսիլ պատկեր. երկնից մէջ կարմրաներկ երփն երփն երանգօք ոլորային ամպ մը կը շրջի, եւ ծովուն վրայ գոյնզգոյն շողից մէջտեղ բեկոր մ'է որ կը քայլէ քաղցրահոս ջուրոց վրայէն, ունենալով իրբեւ զէկ մեղմ քամին եւ իրբեւ սահման ուղւոյ՝ զանհունութիւն, եւ այդ գեղանկար բեկորին վերայ կիսամեռ ընկողմանած կան չորս նաւաբեկեալք որք, ու ժասպառ, հազիւ կրնան իւրեանց գլուխն վեր ամբառնալ, երբ մին ի նոցանէ, յոտին կանգնած, կ'աւետէ շոգենաւու մը գալուստն՝ ոյր ապացոյց է ի հեռուստ նշմարելի մուխն որ կը յառաջանայ: Մարդ ոչ միայն կը յափշտակուի երանգոց փափկութենէն, այլ եւ ներքին հմայք մը կը զգայ այդ համր իրականութեան առաջ. այդ նկարագիր եւս հրաշակերտ մ'է, եւ քերթօղն անշուշտ պիտի բաւականանայ այդու երգելու զայդ բնութիւն, զոր մեծանուն արուեստագիտին անզուգական հանճարն ստեղծած է:

Տակաւին կան յիշատակութեան արժանի նկարներ, զորոց անշուշտ յօժարակամ պիտի



խօսէի աստանօր եթէ դրոյս անձուկ միջոցն թոյլ տար ինձ . սակայն ինչ որ ալ լինի , վերոյիշեալ ամէն հրաշակերտք զօրաւոր ապացոյցք եւ վկայութիւն են արդէն եւ միւս մեծաւքանչ նկարուց :

Այսպէս խորին է տպաւորութիւնն որով գեղեցկին սիրահարն կը մեկնի այդ նկարահանդէսէն . այդ հրաշալից կերտուած նկարք պատուաբեր են յոյժ Պ . Ա. յվազովսքի տիեզերահռչակ անուան՝ եւ փառքն ու պարծանք Ազգին ում կը պատկանի նկարիչն :

Բոլորովին հմայեալ եւ յափշտակեալ կը բաժնուիս յակամայս այդ պատուական նկարներէն , որք մտացդ մէջ , հողւոյդ խորն քանդակեալ կը մնան ընդ միշտ :

Եւ այդ մեծահանձար անձնաւորութեան ճարտար արուեստն եւ մարդասիրական ոգին կուտան ինձ ասել թէ Պ . Ա. յվազովսքի ինչպէս եւ համայնից , մանաւանդ հայ ազգին մէջ իրաւամբ անհամեմատ կարեւորութիւն ունի իբրեւ ոք տաղանդաւոր յոյժ եւ բազմահանձար , մարդասէր եւ ազգասէր :

## ՈՐԴԵԿՈՐՈՅՍ ՀԱՅՐՆ

(Բանք գերեզմանապահին)



Ա՛լ բաւ են բաւ այդ արժանու  
Չոր ջերմաչեմ հեղուս ի սուգ-  
ելիք , ո՛րկ հայր գու վրճակիր,  
Բա՛ւ արժանուես , ա՛լ վեր ելիր :

Ինչն այդպէս ի վայր հակած,  
Ձերկիր անշունչ քեւսարած  
Պինդ պինդ գրկես կասալաբար,  
Եւ քո լեզուա զօս , նրավստ ,

Յիմարի պէս կր համբուես  
Այդ անկենդան հողոյ ըզդեգ-  
Ինչն յայտից քո գրգասուն  
Գրգուես գերկիր ի փայփայում .

Ա՛լ վեր ելիր , բա՛ւ հրծկրլսա-  
Այդ արժանուօքն աղի գաւազ

Մի ողորեր այդան առաս,  
Թո՛ղ զայն մրնալ մի՛ճս անարաս:

Այդ սուրբ հողին՝ ուր յիճասակ  
Որդւոյդ՝ ունին զիւրեանց դրուագ,  
Թո՛ղ արժատեղ այդ մեղաւոր  
Զրխառնրի հրասոչոր:

Ելիր, ո՛րվ հայր, բա՛ն արժատես.  
Այդ արժատե՛լ աղէկքսուր  
Զոր յորդարուիս հեղուս այդպէս  
Հողին կարող չէ մարել հուր

Դու զնձ խրնդրես, հայր յուսահաս.  
Յերկիր դրած ըզքո հակաս.  
Եթէ կենաց զայն ուղեւոր,  
Ի զո՛ւր ողբաս դու գըլխիկոր.

Աչերդ յառէ՛ վեր դէպ յերկին  
Ուր թէ փառաց դրաներ բացուին,  
Պիտի տեսնես ըզոյդ որդեակ,  
Երանելի՛, վարդապարսակ:

Ա՛լ բաւ են բաւ այդ հառաչանք,  
Որդիդ երբեք չէ յիւր պատանք.  
Ի զո՛ւր կարդաս նորա զանուն,  
Դարձեալ կարդաս մի՛ճս դողդողչուն.

Դագրէ՛ լալէ կողկողագին  
Ըզկորուսեալ զանձրդ անգին.  
Ելիր, կանգնէ՛, եւ ձեռնաբաց  
Փառարանէ՛ գերկնիցն Ասուած:



## ԳԱՇՏԱՅ ԱՂՋԻԿՆ

Օրն այն գարնան գրւարք խաղաղ օր մը չէր .  
 Հանդարտ քամին գով չէր շրջէր ի յայեր ,  
 Եւ ոստ ծառոց կենդանալից եւ դալար  
 Սէզ մի շարժմամբ չէին գրգուէր անդ գիւտար :

Այլ ի ծոցոյն երկրի մըխայր հրոյոյ շունչ  
 Եւ ծաւալէր ի յեթերին անմորմունչ .  
 Եւ անմորմունչ կային երկին եւ երկիր ,  
 Եւ ոչ թրուչունք թրուչքէին բարձրաթիռ :

Օրն այն գարնան՝ սրբմած սրխուր չէր սակայն .  
 Յոսքս հրնիմ հրհրուային մեծածայր .  
 Եւ խաւարած մելամաղձոս յիւր նրագ  
 Յերկին յերկիր գաշկունս յաճէր կապուսակ :

Եւ կապուսակ պայծառ երկնից ի կամար  
 Զիւնասպիտակ սրբ ամպոց անհամար  
 Յանուած կային նրման ծրխոյ թրթրուուն  
 Ի չու անկեալ ընդ անջրպէտ յար անհուն :

Միայն դաւտին մրտակ ի սուգ ողբազին  
 Մէկդի թողած բրբիչ եւ բան եւ մանգաղ ,  
 Աղօթէին վարն կենաց օրհորդին  
 Նր հիւանդ էր , անյոյս հիւանդ էր , աւանդ :

« — Ինչն այդպէս գրլուխ կրճած ի խոնարհ  
 « Պինդ սեւեռէք գաշկունս ի հող անդադար .  
 « Ինչն ծոյլ ծոյլ ապշած մրնայք , սասցէք ,  
 « Զեր հակասունք ինչն այդպէս յուսաբէլ : »

Օտարասւոյս յանդիմանիչն այս հարուած .  
 Ի վեր բարձաւ նոցա սրխուր ըզնայուած .

« — Ահ , զի հիւանդ , ոգեվար է մեր օրհորդ ,  
 « Հո՛ն , ծառին սակ , գրնս տեսիւր , ո՛վ անցորդ : »

\* \* \*

Սաղարբախիտ ընդ ուռեկոյն հովանեալ  
 Տեսիլ հանի՛ պարզի աչաց սրտագրաւ .  
 Տեսիլ այնքան սրտայուզիչ՝ ոյր յառաջ  
 Ո՛չ մի ոչ սիրտ կարէ զրոպել զիւր հառաջ .

Իսկ յիմ աչաց արտուք հոսէր յորդաբուխ  
 Եւ զիմ հոգի սրգոյ ծածկէր մառախուղ .  
 Եւ մինչ յուզմամբ լրցեալ կայի անմորմունչ՝  
 Անդէն գոգցես զիս սապալէր մահու շունչ ,

Անուք ի պարզ յինչ ոստեղէն անկողին  
 Քառեակ ցողից վերայ քանուած հաստասուած ,  
 Կր սարածուէր կոյս մը չքնաց երեւային  
 Զեռերն դրած լանջից վերայ անձկայրեաց :

Ինքն ըսպիսակ եւ ըզգեցած ըսպիսակ,  
 Հրեծեսակ մ'էր, լուսաւողոզոյ հրեծեսակ .  
 Ծաղիկներով շրջապատած զիւր մարմին  
 Կապոյտն աչօք ըզդուռ դիտէր եղեմին :

Երկինքն անմտայլ դեռ յիւր նակասն անմտայլ .  
 Ի շող լուսոյ դեռ կը պտտէր անայլայլ  
 Ջիւր կուտուրքեան անբիծ շքնորհս անսրսս,  
 Մինչ վարսօք ծրփուն ծրփծրփային յիւր նակաս :

Ծաղկանց մէջտեղ ինքն ալ ծաղիկ դեռ աղեռ,  
 Ծաղկանցն ըզբոյր ինքնն մաւէր սիրամուէր,  
 Եւ ինք բուրէր անուշաբոյր անուշակ .  
 Ա՛ն, մեր արտից գով գով շքնչէր այդ հրեծեսակ :

Հրեծեսակ մ'էր . երկնից հրեծեսակք ըզմայլուն  
 Հիանային յայդ լուսեղէն զըւարթուն, -  
 Եւ կարկառած զիւրեանց ձեռներ դէպ ի նա  
 Քաղցր ի դաւնակ միւրմրնչէին ովսաննա :

Իսկ նա, համդարս եւ անկեղան սառնամած,  
 Պինդ սեւեռած աչացն ըզժայր երկնասլաց  
 Ընդ եղեմին երամուէտ գաւտուակ  
 Անփոյր սրտիւ առնէր մահու ըզմաւակ :

Եւ անդէն իսկ յանկարծ զաչկուես իւր կապոյտ  
 Գէպ յիս յառած եւ ծրպսպից, եւ անփոյր,

Մառ կափուցան իւր վառ աչերն անմտմտ,  
 Եւ սուրբ հոգին բրտեալ յերկինս վեր անհոգ .

Եւ սաղարթուց մէջէն մի լոյս բոցավառ  
 Եկաւ իսկոյն շողալ դիմաց իւր պայծառ,  
